

Обосновывается, что теория о свободе воли и выбора, развитая Григорием Просветителем, одним из первых применивших философский подход в христианской теологии, не имеет аналогов в христианском богословии, в исторической науке о праве и основана на авестийской-зороастрийской теории свободы воли и выбора. Эта теория научно обоснована более последовательно, чем подобные теории его предшественников Клиmenta Александрийского и Оригена. В статье также доказывается, что Месроп Mashтоц не мог быть автором "Частоповторяемых речей".

## **THE ISSUE OF FREE CHOICE IN “SPEECHES”**

S. A. KHACHATRYAN

The important side of the theory of free will such as free choice is discussed in the article. It argues that the theory of free will and free choice has not its analogue in the Christian theology, history and law which is developed by Gregory the Illuminator who was one of the first to apply the philosophical approach in Christianity. It is based on the Zoroastrian theory of free will and free choice and is argued more consistently than the corresponding theories of Kliment of Alexandria and Origenes. It is stated in the article that Mesrop Mashtots could not be the author of "Speeches".

# ՀԱՅՈՑ ԴԱՏԱՄԱՆԱԳՐՔԵՐԸ

## ՈՐՊԵՍ ՀԱՅ ՄԻՋԱԴԱՐՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՆ

Մ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ  
ԳՊՀ դոցենտ

Հայ ժողովուրդը, լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, ունի իր պատմական, իրավական զարգացման առանձնահատկությունները։ Հայ իրավական հուչարձաններում առկա են իրավաքաղաքական մտքի արժեքավոր վկայություններ՝ մարդու իրավունքների վերաբերյալ իրավանորմեր, որոնք ժամանակին խնդիր են ունեցել պաշտպանելու մարդու անվտանգությունը, նրա ազատ կանքը, պատիկը և արժանապատվությունը։

Իրավական հուշարձանները կանոնական և աշխարհիկ օրենքների համակարգված ժողովածուներն են: Դայ իրավական հուշարձանները մի շարք պատճառներով համաշխարհային իրավաքաղաքական մտքի և մարդու իրավունքների զարգացման պատմության մեջ չեն ունեցել այնպիսի ազեցություն, ինչպիսին ունեցել են անգլիական<sup>1</sup>, ֆրանսիական<sup>2</sup> և ամերիկյան<sup>3</sup> հուշարձաններ:

<sup>1</sup> Տես Ազատությունների Մեջ Խարտիան Անգլիայում /1512թ. հունիսի 15/ (*Արշակյան Ա. Արտասահմանյան Երկրների պետության և իրավունքի պատմություն, Ստրկատիրության և ֆեռդալիզմի շրջան, հատոր 1, Ե., 1997, էջ 150; Խրեստոմատիա по всеобщей истории государства и права / Под ред. К. И. Батыра. Ч. 1. М., 2000):*

<sup>2</sup> Στέν Σμαρητού και ρωμαιοκαθολικού ιεραποντίνου πρεσβύτερη μάσιμη Φρωνανσιακών ήρεζων αρχηγού /1789ρ. ορφανοτητής 26/ (*Αρχαία Καρδία* Α., Κριτικός ανθρώπου, Επικράτεια, 1800) στην οποία αναφέρεται την παραπάνω παρούσα περιπτώση.

Սակայն, հայ իրավաքաղաքական միտքը ստեղծել է այնպիսի իրավունքի աղբյուրներ, որոնք ամրագրում են մարդու իրավունքների վերաբերյալ իրավական նորմեր, և արժանի են լուրջ գիտական ուսումնասիրման:

Դայոց ազգային օրենսդրությունը /իրավական համակարգը/ զարգացել է Երկու հիմնական ուղղություններով՝ կանոնական իրավունքի և աշխարհիկ իրավունքի ձևով: Դայ կանոնական իրավունքի ձևավորումը սկսվել է 4-րդ դարից, երբ քրիստոնեությունը Դայաստանում ճանաչվեց պետական կրոն /301թ./: Այստեղից էլ, աշխարհիկ օրենսդրությանը զուգահեռ, ձևավորվեց նաև կրոնական /Եկեղեցիական/ իրավունքը՝ հիմնականում Եկեղեցական գործիչների իրավաստեղծ գործունեության շնորհիվ: Եկեղեցական գործիչների աշխատանքները վերլուծելիս՝ նկատվում է այն հիմնական գաղափարը, որ մարդու բնական և անօտարելի հատկանիշներից է կամքի ազատությունը, անձնիշխանությունը:

Դայ իրավաքաղաքական հոլարձաններից առանձնակի նշանակություն են ձեռք բերել Հովհաննես Օձնեցի Ինաստասեր կաթողիկոսի «Կանոնագիրը Դայոցը» /730թ./, Դավիթ Ալավկառողու «Կանոնները» /1130թ./, Մխիթար Գոշի «Դայոց դատաստանագիրքը» /1184թ./, Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» /1265թ./, Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» /1166թ./, Հովհաննես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչվի յորդորակը» /1771թ./, Դակոր և Շահամիր Շահամիրյանների «Որոգայք Փառացը» /1787թ./, ինչպես նաև արևնտահայերի «Ազգային Սահմանադրությունը» /1861թ./, որոնցում ոչ միայն տեղ են գտել պետությանը և իրավունքին վերաբերող դրույթներ, այլև՝ մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին վերաբերող նորմեր, որոնք իրենց իրավական նշանակությամբ դարձել են իրավունքի աղբյուրներ:

Ընդհանրապես իրավունքի աղբյուրի, այդ թվում՝ հին միջնադարյան իրավունքի աղբյուրի հասկացության հիմնահարցը իրավագիտության կնճռուտ հարցերից է, որի հետագոտությունը ունի ինչպես պատմաճանաչողական, այնպես էլ գիտատեսական նշանակություն:

Այս կապակցությամբ դեռևս խորհրդային շրջանի հայտնի իրավաբան-գիտնական Ս. Ֆ. Զեչեկյանը նշել է, որ «իրավունքի աղբյուրի հարցը իրավունքի տեսության ամենաչպարզաբանվածներից մեկն է»<sup>4</sup>:

Իրավագիտական գրականության մեջ «իրավունքի աղբյուր» հասկացությունը օգտագործվում է Երկու տարբեր նշանակությամբ՝ «իրավունքի նյութական աղբյուր» (իրավունքի աղբյուր՝ նյութական իմաստով) և «իրավունքի ձևական աղբյուր» (իրավունքի աղբյուր՝ ձևական իմաստով):

Ընդ որում, «իրավունքի նյութական աղբյուր» ասելով՝ նկատի են առնվուն իրավունքի կազմավորման նախադրյալները, այսինքն՝ այն ամենը, որը համապատասխան նոտեցման համաձայն ծնում (ձևավորում) է պողիտիվ իրավունքը՝ այս կամ այն նյութական կամ հոգևոր գործուները, հասարակական հարաբերություն, Նոր ժամանակաշրջան, Ե., 1998, էջ 53; **Փեծոտ Կ. Ղ.** История государства и права зарубежных стран, Л., 1977):

<sup>3</sup> Տես ԱՄՍ-ի սահմանադրությունը /1787թ. սեպտեմբերի 17/ (**Արշակյան Ա.**, Արտասահմանյան Երկրների պետության և իրավունքի պատմություն, Նոր ժամանակաշրջան, Ե., 1998, էջ 136-140; **Ա. Վ. Եֆիմով.** "Очерки истории СПИА, 1492-1870 гг." М., 1958):

<sup>4</sup> Տես **Կեչեկյան Ռ. Փ.** О понятии источника права, Ученые записки МГУ, Вып 116, кн.1, М., 1946:

թյունները, մարդու բնույթը, իրերի բնությունը, աստվածային կամ մարդկային բանականությունը, Աստծո կամ օրենսդրի կամքը և այլն:

«Իրավունքի ձևական աղբյուրը» գործող իրավունքի դրույթների «բովանդակության» արտաքին դրսևորումն է<sup>5</sup>:

Իրավունքի աղբյուրի հարցը գտնվում է իրավաբան-գիտնականների ուշադրության կենտրոնում, և նրա սահմանան խնդրին կան տարրեր մոտեցումներ: Այդ հիմնախնդրին անդրադարձել են Գ. Ֆ. Շերշենկիչը<sup>6</sup>, Վ. Ի. Սերգեևիչը<sup>7</sup>, Վ. Ն. Խորովանյուկը<sup>8</sup>, Գ. Յ. Սաֆարյանը<sup>9</sup>, Վ. Ս. Ներսեսյանցը<sup>10</sup>, Մ. Ի. Մարշենկոն<sup>11</sup>, Ս. Լ. Զիմսը<sup>12</sup>, Ռ. Կրոսսը<sup>13</sup>, և այլք:

Իրավունքի արդի տեսության համաձայն «Իրավունքի աղբյուրները կամ ձևերը իրավական նորմերի պաշտոնական արտահայտման և անրապնդման ձևերն են, որոնք գործում են տվյալ պետությունում»<sup>14</sup>: Իրավունքի հիմնական աղբյուրներն են՝ իրավական սովորույթը, իրավաբանական նախադեպը, նորմատիվ իրավական ակտը, նորմատիվ իրավական պայմանագիրը:

Սովորույթը մարդկանց այն համընդհանուր վարքականուններն են, որոնք փոխանցվում են սերնդից սերունդ, անընդհատ կրկնվում և կատարվում՝ հասարակական գիտակցության ուժով: Սովորույթները մշակվում են հասարակական գործունեության ընթացքում<sup>15</sup>: Սովորույթները լինում են՝ կենցաղային և իրավաբանական նշանակություն ունեցող:

Առաջինները գոյություն ունեն, գործում են հասարակության մեջ՝ առանց պետական իշխանության միջամտության: Երկրորդները՝ իրավաբանական սովորույթները, քույլատրվում են պետության կողմից, հաստատվում և արժանանում են նրա պաշտպանությանը՝ հարկադրանքի մարմինների միջոցով: Կենցաղային սովորույթները երբեմն փոխակերպվում են իրավաբանական սովորույթների:

Իրավունքի սկզբնական ու ամենահին աղբյուրը եղել է սովորույթը, որի գործող հետևանքը սովորույթային իրավունքն է<sup>16</sup>: Սակայն միայն այն սովորույթն է իրավունքի աղբյուր դառնում, որը հասրակական համակեցության մեջ գործադրվում և պահպանվում է իրեն հանապարտադիր նշանակություն ունեցող

<sup>5</sup> Տես **Ներսեսյանց Վ. Ս.** Իրավունքի և պետության տեսություն, Ե., 2001, էջ 155:

<sup>6</sup> Տես **Шершнևич Գ. Փ.** Օնացա թեորիա պարա, Մ., 1911, էջ 368-369:

<sup>7</sup> Տես **Сергеевич В. И.** Լեկции по истории русского права, СПб, 1889-1990, էջ 5:

<sup>8</sup> Տես **Խորովանյուկ Վ. Ն.** Պետության և իրավունքի տեսություն, Ե., 1997, էջ 223-228:

<sup>9</sup> Տես **Սաֆարյան Գ. Ի.** Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Եր., 2010, էջ 441-446:

<sup>10</sup> Տես **Ներսեսյանց Վ. Ս.** Նշվ. աշխ., էջ 155-174:

<sup>11</sup> Տես **Марченко М. И.** Источники права, М., 2005:

<sup>12</sup> Տես **Зицс С. Л.** Источники права, М., 1981:

<sup>13</sup> Տես **Кросс Р.** Прецедент в Английском праве, М., 1978:

<sup>14</sup> Տես **Мицкевич В. И.** Источники /формы выражения/ российского права. Историко-теоретический очерк, закон, Создание и толкования, Под ред. А.С. Пиголкина, М., 1998, էջ 6:

<sup>15</sup> Տես **Բարձրյան Լ.** Հոգնեական մասնավոր իրավունք, Ե., 2001, էջ 30:

<sup>16</sup> Տես **Гравский В. Г.** Всебытая история права и государства, М., 2000, էջ 36-41:

Վարքագծի կանոն:

Սովորութային կանոնները իրավական նորմ են դաշնում, երբ պետությունը իրավաբանորեն ամրագրում է դրանք: Յիրավի, հնագույն ժամանակաշրջանի պետությունների օրենսդրական ժողովածուները, որպես կանոն, կազմված են սովորութային իրավունքի փոխառումներից: Մասնավորապես, այդամիտ են Բարելոնի «Համուրապիկի օրենքները», Յոռմի «12 տախտակները», Յին Յունաստանի «Սոլոնի» օրենքները, Յին Յնդկաստանի «Մանուի» օրենքները, «Ռուսական պրավդան», Մ. Գոշի «Հայոց դատաստանագիրը» և այլն:

Ժամանակակից պայմաններում սովորույթը գգալի չափով կորցրել է իրավունքի աղբյուրի իր դերը, սակայն դեռևս սովորույթները հանդիսանում են իրավունքի աղբյուր: Սովորութային իրավունքը հայ աշխարհիկ օրենսդրության աղբյուրներից մեկն է, սովորույթը հայ իրավունքի աղբյուր է հանդիսացել ազգային դատաստանագործերի համար: Սովորութային իրավունքի նորմերը հայ իրականության մեջ գործադրվել են նաև հետագա դարերի ընթացքում<sup>17</sup>:

Իրավաբանական նախադեպը ժամանակակից աշխարհում առավել տարածված իրավունքի աղբյուր է: Իրավաբանական նախադեպը կոնկրետ գործի վերաբերյալ դատական կամ վարչական որոշումն է, որին տրվում է համապարտադիր նշանակություն:

Դատական նախադեպի եռթյունն այն է, որ կոնկրետ գործի վերաբերյալ դատարանի նախկինում կայացրած որոշումը իրավական նորմի ուժ ունի նաև հետագա նմանատիպ գործերը քննելիս և լուծելիս: Նախադեպային իրավունքը, իր որակական հատկանիշներով պայմանավորված, շատ հաճախ անվանում են «բաց» համակարգ, ի տարբերություն ռոմանա-գերմանական «փակ» համակարգի<sup>18</sup>: Նախադեպային իրավունքի հայրենիքը Անգլիան է:

20-րդ դարի կեսերից նախադեպը որպես իրավունքի աղբյուր սկսվեց կիրառվել նաև մայրցամաքային իրավական ընտանիքում և աստիճանաբար ճանապարհ հարթեց դեպի ազգային իրավական համակարգեր<sup>19</sup>:

Իրավունքի աղբյուրների կարևոր ձևերից է նորմատիվ-իրավական ակտը: Նորմատիվ-իրավական ակտը սահմանված կարգով իրավասու մարմինների կողմից ընդունված փաստաթուղթն է, որը սահմանում, փոփոխում կամ վերացնում, ինչպես նաև գործողության մեջ է դնում իրավունքի նորմերը: Դա նորմատիվ բնույթի պետական ակտ է: Նորմատիվ-իրավական ակտերի շարքին են դասվում սահմանադրությունները, օրենսդրությունը, օրենքները, գործադիր իշխանության մարմինների նորմատիվ որոշումները: Ի տարբերություն իրավունքի այլ աղբյուրների, նորմատիվ ակտերը առավել ամբողջական են արտացոլում հասարակության զարգացման փոփոխվող պահանջները, ապահովում են իրավական կարգավորման անհրաժեշտ կայություն և արդյունավետություն:

Ժամանակակից զարգացած իրավական համակարգերում գգալի տեսակարար կշիռ ունեն նաև նորմատիվ պայմանագրերը: Նորմատիվ պայմանագիրը եր-

<sup>17</sup> Տե՛ս **Սարգսյան Գ.** Հայաստանի իրավական համակարգը և ռոմանա-գերմանական իրավական ընտանիքը, Դատական իշխանություն, Ե., 2012, թ. 11, էջ 38:

<sup>18</sup> Տե՛ս **Давид Р., Спиноза Ж.** Основные правовые системы современности, М., 1998, էջ 245:

<sup>19</sup> Տե՛ս **Սաֆարյան Գ. Ն.** Նշվ. աշխ., էջ 444:

կու կամ ավելի կողմերի համաձայնությունն է, որը պայմանավորող կողմերի իրավասության շրջանակում սահմանում, փոփոխում կամ վերացնում է իրավական նորմեր: Նորմատիվ պայմանագրերը լինում են ներպետական և միջազգային:

Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Միջազգային պայմանագրերը կարող են վերաբերվել պետությունների տնտեսական, առևտորային, ռազմական, մշակութային և այլ ոլորտներին: Ըստ սուբյեկտների՝ միազգային պայմանագրերը դասակարգվում են միջազնական, միջառավարական, միջգերատեսչական պայմանագրերի: Դրանք կնքվում են պետության անունից, ճանաչվում պաշտոնապես, վավերացվում են և սահմանված կարգով ընդունումից հետո պարտադիր ուժ ձեռք բերում պայմանավորվող կողմերի ամրող տարածքում:

Եթե գործող իրավունքի աղբյուրները հիմնականում նորմատիվ-իրավական ակտերն ու սովորության նորմերն են, ապա «իրավունքի պատմության աղբյուրները դարձնում են գերազանցապես գրավոր այն հուշարձանները, որոնցում արտացոլվել են տվյալ ժամանակաշրջանի գործող իրավունքը՝ զանազան դատաստանագրքեր, օրենքների ժողովածուներ, մատենագրական ու վիմագրական վկայություններ և այլն»<sup>20</sup>:

Դատաստանագիրքը պետության կամ կրոնական ազգային հաստատությունների կողմից կողիքիկացված կամ հանակարգված օրենքների ժողովածու է<sup>21</sup>:

Դին Հայաստանում ազգային, աշխարհիկ օրենսդրական ակտեր՝ դատաստանագրքերի, օրենքների հավաքածուների կամ որևէ այլ ձևով չեն եղել: Առաջին անգամ աշխարհիկ օրենսդրության նման ժողովածուներ կանոնների և դատաստանագրքերի ձևով երևան եկան միջին դարերում: Դրանք ազգային դատաստանագրքերն են, որոնք և հանդիսացան միջնադարյան հայ աղբյուրներից մեջ<sup>22</sup>:

Դայ իրավական հուշարձաններում և կանոնական իրավունքում նարդու իրավունքների և դրանց պաշտպանությանը վերաբերող հարցերու որոշակիորեն արտացոլվել են Դավիթ Ալավելի օրուականությանը՝ Կանոններ» աշխատությունում, որը գրվել է 1130թ: Այն հանդիսացել է հայ միջնադարյան իրավունքի կարևորագույն աղբյուրներից մեջ և համարվում է հայկական ինքնուրույն դատաստանագրքի ստեղծման առաջին փորձը<sup>23</sup>:

Դավիթ Ալավելի ստեղծած կանոնները և այլ հին ու միջնադարյան հայ իրավաբանական հուշարձաններ, պետական իշխանությամբ վավերացված և ընդունված չլինելով հանդերձ, կիրառում էին գործնականում, հետևաբար իրավաբանական ուժ ունեցող ակտեր էին հանդիսանում: Ուշագրավ է, որ Դավիթ Ալավելի օրուականությանը՝ հինգեւ նաև հայ եկեղեցիական իրավունքի բոլոր կարևոր հուշարձանները, կազմված էին հազարամյակների ընթացքում գործող

<sup>20</sup> Տես **Սամուելյան Խ.** Դին հայ իրավունքի պատմություն, Յ. Ա, Ե., 1939, էջ 25:

<sup>21</sup> Տես **Ավագյան Ռ.** Հայ իրավական մտքի գանձարան, Յ. 1, Ե., 2001, էջ 20:

<sup>22</sup> Տես **Թովմասյան Ա.** Դին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Ե., 1962, էջ 117:

<sup>23</sup> Տես **Դավիթյան Գ.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Ե., 2001, էջ 21:

սովորութային իրավունքի նորմերի համակողմանի և մանրակրկիտ հաշվառմանը, այսինքն՝ այդ «Կանոնների» հիմքում ընկած է սովորութային իրավունքը<sup>24</sup>:

Գնահատելով Դավիթ Ալավերդու հասարակական, քաղաքական և իրավական հայացքները, ինչպես նաև նրա «Կանոնների» տեղը միջնադարյան հայ իրավաբարձրական հրուշարձանների շարքում, պետք է նշել, որ իր կանոններում նա առաջին անգամ առաջարկել է իրավաբարձրական մտքի մի շարք գաղափարներ: Դավիթ «Կանոնների» ձեռագրերի թիվը հասնում է 17-ի, որոնցից 15-ը գտնվում է Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, մեկը՝ Վեճետիկի, մյուսը Վիեննայի Միսիթարյանների մոտ<sup>25</sup>:

Կանոնների հիմնական աղբյուրներն են՝ սովորութական իրավունքը, Դին ու Նոր Կտակարանները և հատկապես Մովսես մարգարեի Դին Կտակարանի հայտնի Հնգամատյանը, հայ կանոնական իրավունքը:

Բացի վերը նշված աղբյուրներից, նա ուսումնասիրել և օգտագործել է հայ մատենագիրների, հատկապես փիլիսոփաների աշխատությունները, որոնք իրենց ազդեցությունն են բոլել նրա աշխարհայացքի ձևավորման վրա:

«Կանոններ»-ում հանցագործության սուբյեկտ է ճանաչվում որոշակի տարիքի հասած ֆիզիկական անձը: Այս սկզբունքը պահպանվել է առ այսօր և ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքում: Ի տարբերություն այս դրույթի՝ հին և միջնադարյան իրավունքում հանցագործության սուբյեկտ էին ճանաչվում նաև կենդանիները և բնության ուժերը: Խստիվ արգելվում է ինքնադատաստանը, իսկ ինքնադատաստան կատարողները համարվում են հանցագործ և ենթարկվում քրեական պատասխանատվության ու պատժի: «Կանոններ»-ում նշված է նաև անհրաժեշտ պաշտպանության՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի մասին: Պատիժը նշանակելու հարցում հեղինակը սահմանել է մի շարք կարևոր մարդասիրական բնույթի կանոններ: Նա նշել է պատիժը խստացնող և մեղմացնող հանգամանքների մասին: Ծանրացնող հանգամանքներ էին հանցագործությունների դաժանաբար կատարումը, բազմակիությունը, որն իր մեջ ներառում է ռեցեղիվի հատկանիշներ և այլն: Սեղմացնող հանգամանքներ էին անզգույշ հանցագործություն կատարելը, որի դեպքում նախատեսված էր անհամեմատ մեղմ պատիժ՝ դրամական տուգանք, ապաշխարհանք և այլն: Ծանրացնող հանգամանքների դեպքում հանցագործի նկատմամբ կիրառվում էին ավելի խիստ պատիժներ, որոնցից էին մարմնական պատիժը, ազատազրկումը և մահապատիժը:

Ըստ Դավիթ Ալավերդու «Կանոնների»՝ մարդուն կարելի էր ենթարկել քրեական պատասխանատվության, եթե նրա արարքում առկա էր մեղքը:

Համապատասխանարար սահմանված էին մեղքի հետևյալ ձևերը՝ դիտավորություն, անգագուշություն և մեղքի խառը ձևը:

Դավիթ Ալավերդին անդրադարձել է նաև ընտանեկան իրավունքին: Ըստ նրա՝ անուսնանալու համար պետք է լինի կնոջ և տղամարդու կամավոր համաձայնությունը: Նա դեմ էր անհիմն անուսնալություններին: Մեծ նշանակու-

<sup>24</sup> ՏԵ՛Ս Նույն տեղում, էջ 179-244:

<sup>25</sup> ՏԵ՛Ս **Աքրահամյան Ա.** «Դավիթ Ալավերդու կանոնները», /ուսմնասիրություն և բնագիր/, «Էջմիածին», սեպտեմբեր-հոկտեմբեր 1952թ., հունվար, փետրվար, մարտ, 1953:

թյուն էր տալիս Երեխաների անվճար ուսուցման խնդրի լուծմանը:

Իր «Կանոններ»-ում նա կարևորել է նաև աշխատանքային հարաբերությունները, աշխատաժամանակի և աշխատանքի պաշտպանության հարցերը: Որոշ կանոններ վերաբերում էին վաշխառությանը, դիտավորյալ հրկիզմանը, Երդմնազանցությանը, անկարգ լացուկոծի, գերիների ու աղքատների հետ վարչելուն, կանանց ապահովագնի, ծննդաբերության և այլ կենցաղային խնդիրների կարգավորմանը: Լինելով հայ քրիստոնեական Եկեղեցու ներկայացուցիչներից մեկը՝ Դավիթ Ալավելառոդին բնականաբար դրսկորում է որոշակի անհանդուրժողականություն ժամանակաշրջանի աղանդների (Թօնդրակյան շարժման մասնակիցների) և այլակրոնների (նահմեդականների) նկատմանը:

Անդրադասահնալով Դ. Ալավելառոդու կանոններին, ին հայ իրավունքի գիտակ Խ. Սամուելյանը, նկատի ունենալով այդ երկի կիրառական նշանակությունը, այն իրավանք դասել է ազգային դատաստանագրքերի շարքը<sup>26</sup>: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Մանուկ Աբեղյանը՝ նշելով, որ Դավիթ Ալավելառու կանոնները հայկական կանոնական օրենսդրությունն են և դասվում են հայկական դատաստանագրքերի բվին<sup>27</sup>:

Դավիթ կանոնները կարևոր սկզբնաղբյուր են ինչպես հայ իրավունքի պատմության, այնպես էլ միջնադարյան Հայաստանի վարք ու քարքի, հասարականքաղաքական և իրավական ուսմունքների պատմության համար:

Դավիթ Ալավելառու կանոնների քննությունը ցույց է տալիս, որ իրենց բովանդակության բազմազանությամբ դրանք ժամանակին մեծ արժեք են ներկայացրել: Այդ պատճառով էլ զարմանալի չէր, որ Դավիթ Վարդապետի մահվանից բավականին ժամանակ անց դրանք դրանք սկզբնաղբյուր օգտագործել են և Մխիթար Գոշը, և Սմբատ Գունդատարլը՝ իրենց դատաստանագրքերում<sup>28</sup>:

Դատաստանագրքի հայերեն տեքստը առաջին անգամ իրապարակվել է 1953թ-ին:

Մխիթար Գոշը հայ միջնադարյան վերածնության ժամանակաշրջանի կարևորագույն գործիչներից է, ուն մահվան 800-ամյակը լրացավ 2013 թվականին: Այդ երկար ու ձիգ դարերի ընթացքում, սակայն, Գոշի անունը և գրական ստեղծագործության նշանակությունը չխամրեցին: Նա մնաց որպես հայ մշակույթի մեծ երախտավորներից մեկը: Ընդ որում, Գոշով հետաքրքրվել են ոչ միայն իրավագետներն ու գրականագետները, այլև բանասերները, լեզվաբանները, պատմաբանները, մանկավարժները, տնտեսագետները և փիլիսոփաները<sup>29</sup>:

Միջնադարյան Հայաստանի իրավական հուշարձաններում մարդու իրավունքների, մարդկանց ազատության, անվտանգության, իրավահավասարության, պատվի և արժանապատվության գաղափարներն առավել ինչեղ և ցայտուն են արտահայտվել Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագրքում», որը

<sup>26</sup>Տե՛ս **Սամուելյան Խ.** Նշվ. աշխ., էջ 75:

<sup>27</sup>Տե՛ս **Աբեղյան Մ.** Հայ ին գրականության պատմություն, Ե., 1946, էջ 46:

<sup>28</sup>Տե՛ս **Պողոսյան Է. Գ.** Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 2009, էջ 189-190:

<sup>29</sup>Տե՛ս **Թաճանյան Գ.** Մխիթար Գոշի իրավունքի փիլիսոփայությունը, ՊԲՀ, 2012, թիվ 1, էջ 39:

կազմվել է 1184թ-ին:

Բայց Գոշի գլուխգործոցն է «Գիրք դատաստանին», որը բացառիկ արժեք է ներկայացնում և որպես միջնադարյան իրավունքի նշանավոր գործ՝ առաջնակարգ տեղ է զբաղեցնում աշխարհի ճանաչված օրենսդրական հուշարձանների շարքում<sup>30</sup>: Այն կիրառվեց ոչ միայն բուն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, հայկական գաղթօջախներում, մի հանգամանք, որ բացառիկ երևույթ է իրավագիտության պատմության մեջ:

Միիթար Գոշի Դատաստանագիրքը գրված է գրաբարով, բաղկացած է 251 հոդվածից: Հատուկ համակարգում չկա, տեսական դատողությունները գուգակցված են հեղինակի առաջարկություններով, իրավունքի նորմերով ու դրանց բացատրություններով<sup>31</sup>: Քաղաքական իր կողնորոշմանը համապատասխան՝ Ս. Գոշը ոչ թե Ներսես Լամբրոնացու օրինակով փորձել է հայերեն բարգմանել հունական կամ օտար օրենքները, այլ ձեռնամուխ է եղել և ստեղծել ազգային օրենսգիր: Ազգային օրենքների ժողովածուի ստեղծմանը Գոշը նպատակ էր հետապնդում պետականությունը նոր-նոր կորցրած հայ ժողովրդի ինքնագիտակցությունն արթնացմել, սատարել ընդիհանուր համազգային շահերին, հայ ժողովրդի ինքնահաստատմանը և քաղաքական ինքնորոշմանը: Դատաստանագիրքը այս առումով հանդես է գալիս որպես իրավական - քաղաքական ծրագիր<sup>32</sup>: Կողմնակից լինելով կառավարման միապետական ծեփն, նա պետական կառուցվածքը տեսնում է կենտրոնացված իշխանության ձևով՝ միապետի գլխավորությամբ: Յայ իրավագիտության պատմության մեջ առաջին անգամ Ս. Գոշը ուրվագծում է պետության սուվերենության /ինքնիշխանության/ հասկացությունը և առանձնացնում դրա երկու հիմնական հատկանիշները՝ պետական իշխանության լրիվ ինքնուրուցնությունը պետության ներսում և անկախությունը՝ արտաքին հարաբերություններում: Գոշից հետո միայն 16-րդ դարում ֆրանսիացի իրավաբան Ժան Բոդենը «Վեց գիրք պետության մասին» աշխատությունուն անդրադարձավ պետության ինքնիշխանության գաղափարին:

Բացի ինքնիշխանության գաղափարից, Գոշը առաջարկել է նաև օրենքի գերակայության գաղափարը: Գոշը կողմնակից էր երկրում մեկ համապետական օրենք, օրենսգիր սահմանելուն և դեմ՝ ավատական բազմաթիվ, հաճախ իրարամերժ, անջատ-մասնավոր (պարտիկյուլար) օրենքների գոյությանը<sup>33</sup>:

Դատաստանագրքում հեղինակը անդրադարձել է իրավունքի տարբեր ճյուղերին:

Քրեական իրավական նորմերը սահմանելիս՝ Գոշը ելնում է այն տեսակետից, որ հանցագործությունների հիմքում ընկած է մեղքը և մասնավորապես մեղքը քրեական իրավական իմաստով ծագում է ոչ թե բնությունից, կամ ինքնին, այլ երբ մարդը գիտակցաբար խախտում է օրենքը /նաև 2-րդ, հոդված ժք/:

Մարդկանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում

<sup>30</sup>Տե՛ս **Ազագյան Ռ.** Յայ իրավական մտքի գանձարան, 3.1, Ե., 2001, էջ 337:

<sup>31</sup>Տե՛ս **Ազագյան Ա.** Յայաստանի պետության և իրավունքի պատմություն, Ե., 2009, էջ 108:

<sup>32</sup>Նույն տեղում, էջ 109:

<sup>33</sup>Տե՛ս **Սուրիակյան Ա. Ս.** Գոշը և «Յայոց դատաստանագիրքը», Ե., 1962, էջ 20:

Գոշը նախատեսում է երկու մոտեցում՝

1. Քրեահրավական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի մեղքը, այսինքն՝ միայն մեղավորությամբ կատարված արարքի համար մարդուն կարելի է ենթարկել քրեական պատասխանատվության:

2. Պատասխանատվության անհատականացում, այսինքն՝ մարդը ենթակա է քրեական պատասխանատվության միայն սեփական արարքի համար:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարդկանց քրեահրավական պատասխանատվության ենթարկելու և պատժելու հիմքում դատաստանագրքում ամրագրված են սուբյեկտիվ մեղսայնացման և պատժի անհատականացման սկզբունքները և հանցագործության սուբյեկտ կարող է ճանաչվել միայն մարդը՝ 12 տարեկանից բարձր, այն դեպքում, եթե այդ ժամանակաշրջանում Եվրոպայում և այլ երկրներում հանցագործության սուբյեկտ են հանարվել նաև կենդանիները, անգամ բնության ուժերն ու անշունչ առարկաները:

Պատժի հետ կապված՝ Գոշը առաջարկում է, որ նախ պատիժը համապատասխանի կատարած արարքի վտանգավորության աստիճանին, ապա և միայն պետք է պատժել հանցագործի անձը, ինչպես նաև հաշվի առնել հանցագործության կատարման միջոցներն ու մեթոդները, շարժարիթներն ու առաջացրած հետևանքները։ Ըստ Գոշի՝ պատիժը պետք է ծառայի հանցագործին խրատելու և ուղղելու նպատակին։

Գոշի դատաստանագիրը սահմանում է պատժատեսակների սահմանափակ թվաքանակ, և աչքի չի ընկնում իր առանձնակի դաժանությամբ։ Յիմնական պատժատեսակներն են դրամական տուգանքները, մարմնական պատիժները, ազատազրկումը և ապաշխարանքը։ Իսկ ինչ վերաբերվում է մահապատժին, ապա Գոշը դեմ էր այս պատժատեսակին, որը բավականին լայնորեն տարածված էր միջնադարյան պատասխրական երկրներում։ Նրա դատաստանագրքում մահապատիժը կիրառվում է խիստ բացարիկ դեպքերում։ Նա առաջարկությամբ, աքսորով և այլն։

Սկզբունքորեն դեմ լինելով մահապատժին, Գոշը այն համարում է հակաբնական և փոխարինում այլ պատժատեսակներով, միաժամանակ առաջ քաշելով հանցագործին ուղղելու մարդասիրական տեսակետը և այսպիսով հնարավորություն ընձեռում ոչ միայն ֆիզիկական փրկության, այլև հոգնոր վերածննդի համար<sup>34</sup>։ Միիթքար Գոշը բնական իրավունքի տեսությամբ եկավ հիմնավորելու հայ ժողովրդի ազատագրական պայքարը և դրա գաղափարական հիմքը հանդիսացող մարդ-անհատի կամքի ազատությունը և, մյուս կողմից՝ իրավական հիմք ստեղծելու վերականգնվելիք հայոց պետականության համար<sup>35</sup>։

Միիթքար Գոշը անդրադարձել է նաև ամուսնաշնտանեկան հարաբերություններին և սահմանել է մի շարք նորմեր այդ հարաբերությունները կարգավորելու նպատակով։ Այս հարցում նա ելնում էր ժամանակի առաջադիմական գաղափարներից։ Նա գտնում էր, որ ամուսնությունը պետք է լինի ամուսնացող զույգերի կամավոր համաձայնության արդյունք։ Ամուսինը պարտավոր է հարգել

<sup>34</sup> Տե՛ս **Գրիգորյան Ա.** Բնական իրավունքի և մարդասիրական գաղափարները Մ. Գոշի «Դատաստանագրքում»// Պետություն և իրավունք, թիվ 1, Ե., 2001, էջ 62։

<sup>35</sup> Տե՛ս **Սաֆարյան Գ.** Նշվ. աշխ., էջ 254։

կնոց պատիվն ու արժանապատվությունը, մարդկային վերաբերմունք ցուցաբերել նրա նկատմամբ: Ժամանակի թելադրանքից ելնելով՝ Գոշը չի խոսել կնոջ կողմից տղամարդու իրավունքների հարգման մասին, քանի որ միջնադարում տիրապետում էր այն տեսակետը, ըստ որի կինը պետք է ենթարկվի տղամարդուն: Սակայն, չնայած դրան, Գոշը գույքային հարաբերությունների առումով ամուսինների գույքային հավասարության կողմնակից է, ինչը շատ հազվադեպ երևույթ է միջնադարյան ժամանակաշրջանում:

Դատաստանագրքում առկա են նաև արդարադատության իրականացմանը վերաբերող առաջադիմական նորմեր: Դատարանի նպատակը պետք է լինի ճշնարտության բացահայտումը և արդարության հաստատումը: Գոշը իր դատաստանագրքում խոսել է դատավորի վարվելակերպի կանոնների մասին: Ըստ նրա՝ դատավորը պետք է լինի անկաշառ, ունենա գիտելիքներ, աշխատանքի փորձ, լինի համարձակ դատական ատյանում և վճիռ կայացնելիս: Դատավորը պետք է օր ու գիշեր գրաղվի ինքնակրությամբ, յուրացնի բոլոր ազգերի իմաստուն մարդկանց խոսքերը, օրինակ վերցնի նրանցից: Գոշի կարծիքով դատավորը պետք է նաև ներողամիտ լինի:

Միսիթար Գոշը անդրադարձել է դատավարության ծկին: Դատավարությունը, որպես կանոն, բանավոր էր և կրում էր իրապարակային բնույթ, այսինքն՝ դրսքաց էր: Կողմերին լսելուց հետո դատարանը ձեռնամուխ էր լինում վկաների հարցաբնոնությանը: Նա դեմ է եղել դատավարության ինկվիզիցիոն ծկին: Ըստ նրա՝ դատավարությունը պետք է ընթանա մրցակցային ձևով: Չնայած խոստովանությունը միջնադարում համարվում էր ապացույցների «քագուիին», սակայն Գոշը սրան ոչ մի առավելություն չի տվել: Նա դեմ էր նաև երդմանը՝ որպես ապացույցի տեսակի: Գոշը չէր ընդունում նաև բոլոր տեսակի օրդալիաները՝ որպես «Ճշնարտությունը» բացահայտելու բարբարոսական մեթոդ: Օրդալիան արտահայտվում էր երդման, հաղորդություն ընդունելու, շիկացած երկաթը ծերքն առնելու, սառը ջուրը մտնելու կամ մենամարտելու (անզեն կամ զենքով) միջոցով: Օրդալիայի ենթարկվածը ապացուցում էր իր անմեղությունը<sup>36</sup>: Ապացույցների մեջ Գոշը ամենավստահելին և ամենահավատալին համարում էր վկաների ցուցնումքը (նախ., գլուխ է): Վկաների ցուցնումքի հիման վրա կայացված դատավճիռը համարում էր արդարացի:

Միսիթար Գոշի դատաստանագիրքը հավասարը չի ունեցել միջնադարյան հայ իրականության մեջ: Իրավունքի փիլիսոփայության և տեսության տեսանկյունից ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հայոց առաջին աշխարհիկ օրենսգիրքը կազմվել է պետականության բացակայության պայմաններում, մի բան, որը ևս բացահիկ երևույթ է իրավունքի պատմության մեջ: Միսիթար Գոշի իրավագիտական ուսմունքը կազմված է անձի, ազգի և պետության ինքնիշխանության հիմքի վրա<sup>37</sup>:

Նախադրությունը իսկական դատաստանագիրք է՝ դատարանակազմության և դատավարության օրենսգիրք: Նախադրությունը փաստորեն իրավագիտական աշխատություն է դատաստանագրի ստեղծման պատճառների, դատարանի,

<sup>36</sup> Տե՛ս Յովհաննիսյան Ա. «Մարդու իրավունքների հիմնախնդիրը միջնադարյան հայ իրավաբարական հուշարձաններում»// Օրենք և իրականություն, թիվ 7, Ե., 2007, էջ 34:

<sup>37</sup> Տե՛ս Սաֆարյան Գ. Նշվ . աշխ., էջ 251:

դատարանակազմության, վկաների և ապացույցների, դատաստանագրքի նպատակի և խնդիրների մասին: Այստեղ Գոշն արծարծել է նաև գրավոր և բանավոր օրենքների և կրոնական կանոնների տարրերությունը, սահմանել դատավորի վարքագիր առանձնահատկությունները, նրա իրավունքներն ու պարտականությունները, վկաների դերը, երդումը, ապացուցումը, պետության կառավարման ձևը, պետության սուվերենությունը, ժառանգությունը և այլն: Գոշի հայացքներում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում մարդու ազատություններին և իրավունքներին, պետական ինքնիշխանությանը նվիրված գաղափարները: Պետական ինքնիշխանության մասին Գոշի հասկացությունը հեռու չէ պետական ինքնիշխանության ժամանակակից գիտական ընթացումից<sup>38</sup>: Դատաստանագրքի եկեղեցական կանոնները պարունակում են 124 հոդված, որոնցից բուն օրենքներ են 53-ը, իսկ մնացած 71-ը լրացումներ ու հավելվածներ են: Երրորդ մասի նորմերը վերաբերվում են պետության, վարչակարգի, կառավարողների և սեփականատիրության փոխհարաբերությունների հարցերին: Այս բաժինը բաղկացած է 130 հոդվածից: 1-88-ը հիմնական բաժինն է, իսկ 89-ից 130-ը՝ լրացուցիչ և հավելվածային կետերը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Գոշի «Հայոց Դատաստանագրքի» երկրորդ մասի 130 հոդվածներից 56-ը հիմնված են սովորութային իրավունքի վրա<sup>39</sup>:

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունները սահմանազատելու և կարգավորելու վերաբերյալ առաջ քաշված գաղափարներով Գոշը ընդհուպ մոտեցավ իշխանությունների տարանջատման հարցին<sup>40</sup>:

Դատաստանագիրքը գրվել է երկար տարիների ընթացքում, և հեղինակը այն ավարտված չի համարել, քանի որ նրա կարծիքով օրենքները երբեք ավարտուն չեն լինում<sup>41</sup>:

Գոշը տարբերակել է իրավունքի գարգացման հետևյալ փուլերը՝

1. բնական իրավունք,
2. աստվածային իրավունք,
3. սովորութային իրավունք,
4. կանոնական իրավունք,
5. աշխարհիկ իրավունք:

Գոշը առաջնայնությունը տալիս է բնական իրավունքին, որը գոյություն է ունեցել Աքրահամի և հեթանոսների ժամանակ: Բնական իրավունքը ամենից առաջ ենթադրում է անձի ազատություն, ըստ որի մարդը ի ծնե ազատ է: Բնական իրավունքը, ըստ Գոշի, աստվածային բնակության արտահայտությունն է մարդու մեջ<sup>42</sup>:

Դատաստանագիրքը տարածվել և գործածվել է ոչ միայն պատմական Հա-

<sup>38</sup> Տե՛ս **Швецов В.** Государственный суверенитет, М., 1979, էջ 5:

<sup>39</sup> Տե՛ս Армянский судебник Мхитара Гюса, Пер. с древнеармянского А. А. Папояна, ред., вступительная статья и примечания Б. М. Арутюняна, Е., 1954, էջ XX:

<sup>40</sup> Տե՛ս Քաղաքագիտություն, Ե., 2006, էջ 102:

<sup>41</sup> Տե՛ս **Մանուչարյան Յ. Գ.** Նշվ. աշխ., էջ 89:

<sup>42</sup> Տե՛ս **Պողոսյան Է. Վ.** Նշվ. աշխ., էջ 196:

յաստանում, այլև հայկական գաղթօջախներում՝ Լեհաստանում, Ղրիմում, Վրաստանում, Ռուսաստանում և այլուր: Դեռևս միջնադարում այն թարգմանվել է լատիներեն և դպչադերեն<sup>43</sup>:

Ծնորհիվ օրենսգրքի, բազմաթիվ նորմեր ընդունելություն գտան «հին աշխարհի» մի շարք երկների օրենսդրություններում՝ այսպիսով ծառայելով աշխարհի իրավական մտքի զարգացմանը<sup>44</sup>:

Միջթար Գոշի դատաստանագիրքը հայ իրականության մեջ գործեց մոտ 600 տարի<sup>45</sup>: Միջթար Գոշի դատաստանագրքի գնահատման համար նախ պետք է նշել, որ, բացառությամբ Հուստինիանոսի «Corpus iuris civilis» ժողովածուի և հետագայում բյուզանդական օրենքների, նրա ապրած դարաշրջանում չեն եղել «Յայոց Դատաստանագրքին» հավասար իրավական հուշարձաններ<sup>46</sup>:

Հայ մշակույթի անխոնց մշակ Ղևոնդ Ալիշանը, գնահատելով Գոշի գործունեությունը, նշում է, որ նա կարող էր իրեն անմահացնել, եթե անգամ «Դատաստանագրքից» բացի ոչինչ չթողներ<sup>47</sup>:

Եթե Արիստոկես Լաստիվերցին ողբում էր ազգային թշվառությունը, Յովիան-նես Սարկավագը աղոթում էր, որ վիատված հայ ժողովուրդը հավաքվի և փրկվի, Ներսես Ծնորհալին խաչակիրների օգնությամբ արևելյան քրիստոնյաների «լավ օրերի ու վերածաղկման» երազն էր առաջարդում՝ չունենալով Յայաստանի անկախության, հայոց թագավորության բուն հայրենիքում վերականգնելու կովաններ, ապա Միջթարը ուներ քաղաքական ազատության իրական հեռանկար և համոզված էր, որ կվերականգնվի հայկական թագավորությունը: Ըստ որում, նա հույսը կապում էր ոչ թե արտաքին միջամտության, այլ երկրի ներքին՝ սեփական ուժերի հետ:

Այդ հեռանկարը և համոզնունքը իրենց դրսերումն են գտել թե նրա առակագրում և թե դատաստանագրում<sup>48</sup>:

Հայ իրավական մյուս նշանավոր հուշարձանը Սմբատ Սպարապետի /Գունդտարի/ «Դատաստանագրքն» է՝ գրված 1265թ–ին: Այն կազմվել է Ս. Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա և գործել է Կիլիկիայի հայկական թագավորությունում /1080-1375թ./:

Սմբատ Սպարապետը միջնադարի հայ ամենաերևելի քաղաքական և գրական գործիչներից է, որը որպես գորքերի գլխավոր իրամանատար մինչև կյանքի վերջը սուրբ ծեռքին պատշաճնեց հայոց պետականության անկախությունն ու անվտանգությունը, որպես խոշոր դիվանագետ՝ պաշտպանեց հայոց պետականության շահերը արտաքին հարաբերություններում, որպես օրենսդիր՝ իր «Դատաստանագրով» բավարարեց ժամանակի հայ իրականության իրավական պահանջները, որպես պատմիչ՝ իր «Տարեգրքով» գալիք սերունդներին ավան-

<sup>43</sup> Տե՛ս **Միրումյան Կ.** Քաղաքական ուսմունքների պատմություն, Երևան, 2006, էջ 247:

<sup>44</sup> Տե՛ս **Խաչատրյան Ա.** Գոշի դատաստանագրքի կիրառումը պատմական Յայաստանի սահմաններից դուրս// Օրինականություն, N 35, Երևան, 2006, էջ 42-45:

<sup>45</sup> Տե՛ս **Սաֆարյան Գ.** Նշվ. աշխ., էջ 99-100:

<sup>46</sup> Տե՛ս **Սուրիհասյան Ա.** Գ. Նշվ. աշխ., էջ 61:

<sup>47</sup> Տե՛ս **Ալիշան Դ.** Յայապատմում, Վեճետիկ, 1901, էջ 101:

<sup>48</sup> Տե՛ս **Պիվազյան Է.** Նշվ. աշխ., էջ 87:

դեց ժամանակի պատմությունը և վերջապես որպես թարգմանիչ՝ իր թարգմանած «Ասիզներով» կորստից փրկեց և համաշխարհային իրավագիտության սեփականությունը դարձրեց միջնադարի այդ իրավական հոլշարձանը<sup>49</sup>:

Սմբատը իր ամբողջ կյանքը տվեց հայ վերածնված պետությանը ծառայելու գործին: Նա աչքի ընկնող զորավար էր, դիվանագետ, պատմաբան և իրավագետ<sup>50</sup>: Սմբատը շուրջ 50 տարի, մինչև իր մահը /1276թ./, որպես պետության սպարապետ /Գունդստարլ/, գլխավորում էր զորքը ու միշտ պատրաստ էր պաշտպանելու թշնամիների հարձակումներից հայրենի երկրի սահմանները: Կիլիկյան պետության համար Սմբատ Գունդստարլը նույն է, ինչպիսին նրա ժամանակակից և բարեկամ ժուանվիլն էր /1225-1317թ./ Ֆրանսիայի համար<sup>51</sup>:

Ուշագրավ են Սմբատ Սպարապետի հայացքները իրավունքի և օրենքի, օրինականության, ամուսնաընտանեկան, քրեական, աշխատանքի պաշտպանության, երեխաների կրթության, պատերազմի և խաղաղության հարցերի վերաբերյալ: Սմբատ Գունդստարլի «Դատաստանագիրքը» ըստ իր ձևի և համակարգված շարադրանքի, ըստ նյութի դասավորության՝ խևական օրենսգիրը է, կողիքիկացված փաստաթուղթ, թեև օրենքների այս հավաքածուն կոչվում է «Դատաստանագիրք», սակայն այն բովանդակում է ոչ միայն դատական, այլև իրավունքի մյուս ճյուղերին պատկանող նորմեր:

Սմբատի դատաստանագիրքը բովանդակում է 177 պարագրաֆներ: Իրավանորմերը դասավորված են հետևյալ կարգով՝ պետական և վարչական իրավունք (1—3, 70—71 և այլ պարագրաֆներ), եկեղեցական իրավունք (8—17, 21—39, 51—66 և այլ պարագրաֆներ), քաղաքացիական իրավունք (96—114 և այլ պարագրաֆներ), գրավադրման և հիպոթեկային իրավունք (99—104 պարագրաֆներ), ամուսնաընտանեկան իրավունք (72—98 և այլ պարագրաֆներ), ժառանգական իրավունք (94—96, 113—114 պարագրաֆներ), իրավախախտումներից և քրեական իրավունքից բխող պարտավորություններ (1—19, 119—177 և այլ պարագրաֆներ), դատական իրավունք (1, 48, 49, 61, 71, 79, 112 և այլ պարագրաֆներ), առևտորային իրավունք (106—112 և այլ պարագրաֆներ), ստրկատիրական և ճորտատիրական իրավունք (18, 115—118 պարագրաֆներ)<sup>52</sup>: Յայ իրավական հոլշարձաններում Սմբատ Գունդստարլի «Դատաստանագիրքը» առաջին իրավական փաստաթուղթն է, որտեղ հեղինակը թվարկել է արքայական պալատի աստիճանավորների պաշտոնները, սահմանել նրանց պարտականությունները, հստակ տարանջատել նրանց գործառույթները, ինչպես նաև դասակարգել պաշտոնները՝ ըստ դասերի սահմաններով պաշտոնների անվանումները, զգեստավորման պահանջները: Ուսումնասիրելով այդ պաշտոնյաների պարտականությունները՝ նրանց ծառայությունը կարելի է բնորոշել որպես մարդասիրական գործունեություն, ինչը համարվում է նաև արդի պետական ծա-

<sup>49</sup> Տե՛ս **Սաֆարյան Գ.** Սմբատ Սպարապետի իրավաբարական հայեցակարգ// Օրինականություն, թիվ 65, Ե., 2011, էջ 2:

<sup>50</sup> Տե՛ս **Սուրեհասյան Ա.** Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմությունը, Ե., 1978, էջ 236-237:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 241:

ռայության բնութագրիչներից մեկը<sup>53</sup>:

Ըստ նրա՝ իրավունքի և օրենքի եռությունն ու նպատակը կարգուկանոն հաստատելու և ծառայելու հասարակական բարօրությանը: Աշխարհական օրենքները, արտացոլելով աստվածային իրավունքը, կոչված են կարգավորել աշխարհիկ հարաբերությունները և պատմել օրինազանցներին: Սմբատ Սպարապետը ամուսնության համար սահմանում է որոշակի տարիք՝ 15 տարեկանը և պարտադիր համարում ամուսնացողների կամավոր համաձայնության առկայությունը: Նա պաշտպանում է նաև կնոջ պատիվն ու արժանապատվությունը: Մեծ ուշադրություն է դարձրել երեխաների խնամքի, դաստիարակության և կրթության հարցերին: Դատաստանագրքով նա իրավաբանորեն ամրագրել է երեխաների անվճար ուսուցումը:

Միփրար Գոշի նման նա նույնականացնելու մեջ օբյեկտիվ մեղսայնացման սկզբունքը և ամրագրել է պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Պատիժը պետք է կիրառվի մեղադրվող անձի նկատմամբ՝ սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքին համապատասխան:

Սմբատ Սպարապետին հայտնի էր նաև անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, որի դեպքում մարդը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Սպարապետը կանգնած էր արդարադատության օրինականության դիրքերում և պնդում էր, որ արդարադատությունը պետք է իրականացվի օրենքի հիման վրա: Օրենքը պետք է պահպանվի բոլորի կողմից, այդ թվում՝ թագավորի:

Նա նաև խաղաղության և ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների կողմնակից էր: Մասնավորապես, նրա անմիջական ջանքերով կնքվեց հայ-մոնղոլական 1225 թվականի պայմանագիրը, որով ոչ միայն կասեցվեց մոնղոլական աշխարհակործան արշավանքը դեպի Կիլիկիա, այլև Յայաստանում որոշակիորեն մեղմացվեց մոնղոլական տիրապետության ծանրությունը: Այս պայմանագիրը կնքվեց Մանգու խանի նստավայրում՝ Կարակորումում: Սույն պայմանագրի երկրորդ հոդվածով մշտական խաղաղության և բարեկամության հիմք է դրվել մոնղոլների և քրիստոնյաների միջև<sup>54</sup>:

Սմբատ Սպարապետի իրավաքաղաքական հայեցակարգի հիմնադրույթներն են՝

1. Պետության լավագույն ձևը սահմանադրական միապետությունն է:
2. Միապետի իշխանության սահմանափակումները վերաբերվում են՝  
ա/ թագաժառանգման մեխանիզմին,  
բ/ պատաստերերի անձեռնմխելիության պաշտպանությանը:
3. Դատական գերազույն իշխանությունը պատկանում է թագավորին /պետությանը/, իսկ եկեղեցականը դրա շարունակությունն է:

<sup>53</sup> Տե՛ս **Դավթյան Գ.** Իշխանավորի վարքագիր կանոնները և կիրառվող սահմանափակումները հայ իրավական հուշարձաններում// Դատական իշխանություն, Ե., 2011, թ. 7, 8, էջ 62:

<sup>54</sup> Տե՛ս **Ազագյան Ռ.** Նշվ. աշխ., էջ 646:

## АРМЯНСКИЙ СУДЕБНИК КАК ИСТОЧНИК АРМЯНСКОГО СРЕДНЕВЕКОВОГО ПРАВА

**M. A. МУРАДЯН**

В статье рассматривается проблема источников древнего и средневекового права. Изучаются обычное право, судебный прецедент, нормативо-правовые акты и договоры.

Досконально показаны судебники средневековой Армении и Киликийского государства, которые стали важными источниками права.

## THE ARMENIAN CADE OF LAW AS THE SOURCE OF THE MEDIEVAL ARMENIAN LAW

**M. A. MURADYAN**

The author examined problems of sources of medieval law. He thoroughly considered statute books of Medieval Armenia and Cilicia.

# ՅԱՆՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

**Ա. Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

ԴՅ գլխավոր դատախազության իրավական  
ապահովման և եվրախնտեգրման բաժնի պետ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, դռցենտ

Քրեական դատավարության գիտության մեջ առաջարկվել է հանրայնությունը դիտարկել որպես քրեական դատավարության սկզբունք<sup>1</sup> և այն ամրագրել քրեական դատավարության օրենսգրքում<sup>2</sup>:

Ուկրաինայի Հանրապետության նոր քրեական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 2012թ. ապրելի 13-ին) 25-րդ հոդվածում որպես քրեական դատավարության սկզբունք նշվել է հանրայնությունը, որի համաձայն՝ դատախազը, քննիչը քրեական հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու (բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթը կարող է սկսվել միայն տուժողի դիմումի հիման վրա) կամ հանցագործության նասին հաղորդում ստանալու դեպքում պարտավոր են իրենց իրավասության շրջանակներում սկսել մինչդատական վարույթ և ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները հանցագործության հանգանակները և այն կատարողին պարզելու ուղղությամբ:

<sup>1</sup>Տե՛ս Ալեքսեև Հ. Ս., Ճաև Բ. Գ., Կոկօրև Լ. Դ. Օчерк развития науки советского уголовного процесса, Воронеж, 1980, էջ 40:

<sup>2</sup>Տե՛ս Բանդուրյան Ս. Գ. Публичность как принцип уголовного судопроизводства и его действие в стадии возбуждения уголовного дела, Автореф. дисс. к. ю. н., Саратов, 2004, էջ 5: